

ծանձանք նշաններն են :

Իսոր աշխարհիս երեսը մէկ ժա-
մուան մէջ 3000 մարդ կը ծնի, գրեթէ
նոյնչափ ալ կը մեռնի :

Շողորթը թու թեամբ մեծամեծաց
մոլուձիւնները կը զօրանան, առա-
քինուձիւնները կ'աւրուին :

Բարբախտ մարդուն ինչ ալ ընես,
իր երախտագիտութեանը արժանի
բան չտեսեր :

Միայն առաքինութեամբ մենք
մեզմէ վեր կը բարձրանանք :

Որչափ շատ ապրինք, այնչափ ա-
ւելի գերեզմանին կը մօտենանք :

Կախապաշարմունքներով վարուող
մարդը՝ աչքին վրայ միշտ կապ մը ունի :

Մարդկանց վրայ մէկ նայուածքով
մը դատաստան պէտք չէ ընել :

Չար օրինակ տուողներ կան որ մե-
ծամեծ յանցաւորներէն աւելի վնա-
սակար են :

Բռաքինութեան քաջութիւնը ին-
չուան իր թշնամիներն ալ սիրելու
վրայ հաստատուած է :

Մեծ մարդիկ անոր համար մեծ
բանի ձեռք կը զարնեն, վասն զի մեծ
կը ճանչնան զանոնք . իսկ խենթերն
անոր համար՝ վասն զի դիւրին կար-
ծեն զանոնք :

Խոհեմ մարդը խորհուրդ հարցը-
նելն ալ գիտէ՝ անոնց հաւանիլն ալ :

ՕՐՏՆՈՒԹԻՒՆ

Ա՛ռ քիեղերախոս Սերն Աստուծոյ :

Ա .

ԱՍՏՈՒԱԾ իմ, ըի է քեւ աշխարհս համօրէն,
Երկինք ու երկիր զսէր քո կարգան և օրհնեն .
Յարեւելից մինչև ի մուտս արևուն
Սրբուի նդ լուսոյ տըրնջեան քո սուրբ անուն :
Թէ ի կապոյտ յառեմ խորան զաչս ի վեր
Եւ շուրջ ածեմ անպարագիրն ընդ եթեր ,
Ըզգործ մասանց քոց նըշմարեմ անդ զարև
Որ մանկական գընտին հանգոյն շարժեալ քե
Գնայ սահելով զանբառութեանն ասպարէզ ,
Ընդ ջերմ կենաց քարոզելով զսէր քո մեզ :
Եւ թէ նդ լըրինս հայիմ, խորանք անշարժուն ,
Թէ յառ նոցունց ուղից հոսանս կարկաջուն ,
Եւ թէ նդ կանաչ քօղս օդոց , մայրս երկնուզէչ :

Միաբարբառ հընչեն ըզսէր քո յաւէժ .

Եւ թէ խոնարհ խաղամ ընդ գաշա ծաղկաճեմ ,
Ու ի խաղս առուաց մանուածաւալ զինչ լըսեմ .
Եւ զինչ ի թեա սաւառնազուարճ զեփիւսին .
Ձինչ քարավէժ ի ցուրտ բիւրեղ ծործորին ,
Կամ զինչ ի վարդ ծիրանածին թագաւոր
Եւ ի գըշտոյն հովտաց շուշան գեղաւոր .
Ձինչ յայնքան երփն և ի բուրմունս զանազան
Ի գեղս գարնան , թէ ոչ ըզսէր քո միայն :
Եւ զինչ այլ, տէր, զինչ ի լուութեանն հասարակ
Երբ կայ գերկրաւ խաղաղութիւն շըրջափակ ,
Եւ կան բնութիւնք ընդ հովանեաւ քով ի քուն ,
Նուիրակ նոցին ի դիտանոց սաղարթուն
Հանգէս լուսնին ընդ պատուհանն արծաթի
Որոյ նընջեն ճաճանչք յառուակն ի գաշաի ,
Ընդ միջև լով ըզլըուութիւն և զգիշեր
Ձինչ գեղգեղեալ յապուշ կը թէ զուռ այեր ,
Մինչ ոչ հոգմիկ շըջի , ոչ ջուր խոխոջէ ,
Եւ ըստուերաց անգամ շարժել կամք ոչ է ,
Եւ թէ զարթնուն տարերք՝ հաճին կալ անշարժ
Յորչափ սիրոյդ գործեակն հընչէ գերահրաշ :
Ո՛հ , անդ և իմ ուամէն սրբաի սիրոյ ձայնք ,
Նա և լուութիւնն՝ իմաստնագոյն արձագանգք ,
Շընչով հաւկին ծաւալացեալ և անզուսպ
Առ տենչալիդ իւրեանց ձրգտին առ տէրդ հուս .
Լուսին ուաստեղք կապեն զանիւս արծաթեայ .
Ոչ ճըռընչէ սայլն եթերին լուսակայ ,
Ձի համարձակ իղձք մահացուաց հասցեն քեզ ,
Եւ յարարածս անըզբաղ դու դիտեսցես :
Այլ և յաշխարհն ազատ յանհուն և վըսեմ
Եւ ի շաւիղն ահաւորս զայն սէր լըսեմ ,
Հըսկայածին յորժամ կոհակք նիւս առ նիւս
Լայնահարուստ մընչմամբ խոճեալ իբր ի գուրս ,
Եւ ձօճելով ձակատ վըսեր պաղպաջուն
Գան խրոխաք , բաղխին հըզօրք , վանին գողոթունք .
Եւ յաւազին գրոշմեալ պայծառ ըզփրփուր՝
Քան առ զայրուցս՝ յայտնեն դիմեալս ի համբոյր .
Նոյնք թէ ի դիւր յուսոյ շահու մահացուաց
Ուս մատուցեալ անգըրուարիցն եղևնեաց ,
Եւ թէ անլուրք գեռան անձանց ի գբօսանս
Հորմավարեալք ընթանալով բիւր վտաւանս ,
Նոյն օրինակ և թէ նդ մըրրկաց սէգ գուժմար
Որոտալով յանդընդոց գան ի գուպար ,
Մահունս աւերս ըսպառնալով բազմադէմ ,
Խուն մի չի՛խեն և անդ սիրոյդ կալ ընդդէմ :
Յո՛ւմ ի քոյոցդ ոչ գուցէ սուրբ քո կընիք ,
Եւ որ հաստուած դաժան՝ ոյր ձայն սիրոյ չեք .
Շաղն հանգարտիկ որ զեղանի գիշերայն
Եւ մատրուակ պարտիզաց ցօղ մարդարտեայն
Ոչ առաւել ինչ սէր ծրագրեն ի ծաղկունս ,
Քան որ յայերս մուայլ ամպրոպաց թափ ը դրունս
Բնութեան սոսկումն և զօրութեանդ արձագանգք
Հրածին կայծից ձայնեղ շըռինգք շանթեալդ ,
Ձի այնքանեաւ զինեալ թընդմամբ և բոցով
Յուկիցդ անասն իբր ուղղեկին նաւ ի ծով .
Որպէս զի նոր հրաման թէ տաս յօդոյն մէջ ,
Որձանացեալք և կամ դարձցի ի մութ գէջ .
Ձի գու տէր , գու զգաղանութիւնն իսկ գիտես
Սանձել սիրով , փոխել զառիւծ ի գառն հեզ .
Եւ յոստ մայրուոյն՝ դ որով յովազք որջանան
Գու խաղաղես գբուն տատարկաց մեղմական .
Եւ գէմ՝ ծովուն լեռնակուտակ ծընընդոց
Ձաղկիովի շինես բունիկ գերծ հոգոց :

Բնութիւն ջեռեալ 'ի սէր ծոցոյդ 'ի ծընէ
 Խաղաղական զօրինօքն ոչ անցանէ,
 Տոյք աշխարհաց անգուլ յառանցս հաստարեսս
 Սիրով ճեմին անշեղ յիւրեանց կալով հետս,
 Եւ քառագէժ միշտ յեղանակք ձեռն 'ի ձեռն
 Քաղցրածրպիտ և զցուրան առնեն իսկ ձրմեռն
 Յորժամ գարունն իբրև մանկիկ ծերութեան
 Ի գիրկ զառամմօրն արձակէ զծաղրն զայն,
 Ամարայնի միգս ընդ ծաղկանց յերկրեւ
 Եւ գայ աշուն աղուրայնեք ոսկեթել,
 Իւ անկորուստ երկիր պահէ զնախկին սերմն
 Յերանաւէս զոր դուն արկեր մայրն յեղեմ:

(ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՍ :)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Չինու երկրն վրայ արդէհոմիւն :

Թիգրեսեի այսպիսի համառօտ գը-
 րուածքի մը մէջ չկարենանք ընդար-
 ձակ տեղեկութիւն տալ Չինացւոց
 պէս մեծ ազգի մը վրայ, բայց գէթ
 վեր 'ի վերոյ կերպով ընդհանուր գի-
 տելիքները հոս գնել հարկ կը համա-
 րինք . մանաւանդ որ աս տարիներս
 աւելի կերպով մը Աւրոպացիք ուշա-
 դրութիւն կ'ընեն Չինաց վրայ, ա-
 նոնք ալ կամաց կամաց ուրիշ աչքով
 կը նային Աւրոպացւոց, ինչպէս որ
 ետքը կը տեսնենք :

Չինու տէրութեան մասերն են
 բուն Չին, Թիպէթ, Պուլթան, Վու-
 րէա, Սողու, արևելեան Թուրքա-
 ստան կամ փոքր Պուխարա, և Սան-
 չու Թաթարաց երկիրը : Տարածու-
 թիւնն է 4,000,000 քառակուսի մղոն,
 և բնակիչը 170,000,000 հոգի : Լսոնք
 իրենց կրօնքին նայելով կը բաժնուին
 Պուտեանք՝ որ Աոնփուկիոսի հե-
 տեոզներն են, Ամայեանք, Ֆե-
 թիչեանք, մահմետականք, քրիստո-
 նեայք ու հրեայք : Հրեայք քանի մը
 հազար հոգի են որ Պարսկաստանի
 արևելեան կողմէն հոն գնացեր են :

Մեր հին պատմութեանց մէջ աս
 ազգը ճէնք անունով հռչակուած է .
 և ասոնցմէ էր սրբոյն Տրդատայ ժա-
 մանակը Հայաստան եկող Սամգուն

իշխանը, որ Սամիկոնեան ցեղին նա-
 հապեան եղաւ : Բայց ետքերը միայն
 այսպիսի յիշատակութիւն մը կայ որ
 չորեքտասաներորդ դարուն մէջ մեր
 ազգէն ոմանք սնով տեղով Չին գնա-
 ցեր են, և հոն մեծատուն տիկին մը իր
 ստրկովը փառաւոր ու մեծ եկեղեցի
 մը շինել տուեր է, որ ետքէն եպիս-
 կոպոսանիստ եկեղեցի եղեր է :

Չինու գլխաւոր քաղաքներն են
 Փէքին, որ աշխարհքիս էն մեծ քա-
 ղաքը կը սեպուի . արուարձանները
 դուրս ձգելով, շրջապատն է 15,400
 ձողաչափ, և մէջի բնակիչն է 1,300,000
 հոգի : Վեան-նինկ կամ Լանքին, որ
 500,000 բնակիչ ունի : Վանթոն՝ որ
 Լսիոյ խիստ վաճառաշահ քաղաքնե-
 րէն մէկն է, ու կէս միլիոնէն աւելի
 բնակիչ ունի : Հան-չէու, որ 700,000
 բնակիչ ունի :

Չինաց տէրութեան եկամուտը ու
 մանք ինչուան հազար միլիոն Ֆրան-
 քի կը հանեն : Օրքը ինը հարիւր
 հազարէն աւելի է, բայց ասոնք հա-
 զիւ կրնան գէժ կենալ յիսուն հազար
 եւրոպացի զօրաց :

Առաւելարութիւնը միապետական
 է . կայսրը կամ Թագաւորը կ'ըսուի
 որդի երկնից, և տէրութիւնը՝ երկնայն
 արդոմիւն : Հին ատենէն 'ի վեր օրէնք
 եղած է որ ինքը կ'ընտրէ զանազան
 պաշտօնատէրները, դատաւորները,
 խորհրդականները և գիտնականնե-
 րը, որ իրեք կարգ կը բաժնուին . եր-
 րորդ կարգին ամէն տղաք կրնան ե-
 տեւ ըլլալ, ու քննուելէն ետքը՝ ար-
 ժանաւորները կ'ընտրուին . երկրորդ
 կարգինները երրորդին մէջ քաջ գըտ-
 նուողներն են որ հասարակաց գոր-
 ծողութիւններուն մէջ կը մտնեն . ա-
 ռաջին կարգն ալ երկրորդէն կ'անց-
 նին, ու ինչուան տէրութեան առա-
 ջին պաշտօններուն կը հասնին :

Թագաւորութեանը յաջորդութիւնը
 որդւոց որդի է . այսինքն Թագաւորը
 մեռնի նէ՝ իր մեծ որդին տեղը կ'անց-
 նի . Թէ որ որդի չունենայ՝ իր մօտ
 ազգականը :